

ԱՆՍԱՐ ԽՄԱՐԿԻ ԵՐԵՔ
ԿԱՍԿԱԾԵԼԻՆԵՐ
ՉԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ
ՀԻՒՄՆԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ

Քրտական ուժեր երկ Բերքու-
քի մէջ ձեռքարկած են արմատա-
կան իսլամական Անսար էլ Սալամ
խմբակի երեք կասկածելիներ,
որոնց մօտ կը գտնուէր պայթուցիկ
նիւթեր եւ որոնք կը ծրագրէին
ականահարել շրջանի քարտուղի
կեդրոններէն մէկը:

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتك جريدة يومية سياسية وأدبية - للبرية السؤولة، إضادرويشيان**
1500 Լ.Ո. 76Գ. ՏԱՐԻ, ԹԻԻ 149 (21491) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՋ

ՔԱՐԱԾԻՉԻ ԴԵՍ ԱՊԱՐԴԻԻՆ
ԳԵՏԱՆՈՒՉՈՒԹԻՒՆ

Պոսնիական ոստիկանութիւնը
երկ յատուկ հետախույզութեան ձեռ-
նարկեց սերայ պոսնիացի նախկին դե-
կապար Ռատովան Քարածիչի դէմ,
սակայն ապարդիւն: Քարածիչ իբրեւ
պատերազմի ոճրագործ կը հե-
տապնդուի միջազգային ընտանիքին
կողմէ: Ըստ կորս մը աղբիւրներու,
ան կը գտնուի Պոսնիոյ տարածքին,
սակայն անոր վայրը ցարդ կը մնայ
թաքուն:

ԹՐԻՓՈՆԻ - ՊԵՅՐՈՒԹ
ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

ԼԻՊԻԱ ՓԱԿԵՑ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ ԻՐ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ

Լիպիա երէկ փակեց Լիբանանի մէջ իր դեսպանա-
տունը: Լիպիական իշխանութիւնները երկու նամակ-
ներ յղած են վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ արտաքին
գործոց նախարար Ժան Օպէյտի եւ անոնց պաշտօնա-
պէս փոխանցած իրենց որոշումը:

Լիպիական դեսպանատունը փակելու որոշումը
տրուեցաւ Իմամ Մուսա Սատրիի առեւանգման իշա-
տակին նուիրուած ձեռնարկին ընթացքին (անցնող շա-
բաթավերջին) յայտարարուած կեցուածքներուն լոյսին
տակ:

Ըստ լիպիական աղբիւրներու՝ դեսպանատան պաշ-
տօնատարները արդէն իսկ պարպած են իրենց գրասեն-
եակները եւ մեկնած՝ երկրէն:

Միւս կողմէ, «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան
համաձայն՝ լիբանանցի բարձրաստիճան պաշտօնատար
մը յայտնած է, թէ Լիպիա ոչ միայն կ'ուզէ Լիբանանի իր
դեսպանատունը փակել, այլեւ դիւանագիտական իր յա-
րաբերութիւնները ամբողջովին խզել Լիբանանի հետ:

Հակառակ այս տեղեկութեան սակայն, ԱՅՓ լրատու
գործակալութիւնը կը հաղորդէ, թէ լիպիացի պաշտօ-
նատար մը՝ Հասսունա Շուաւ, շեշտած է, թէ Լիպիա
որոշած է փակել իր դեսպանատունը պարզապէս իբրեւ
բողոք լիբանանցի կարգ զր դեկավարներու դէմ, որոնք
չեն կրնար իրենց մարզը զսպել Լիպիոյ դէմ: Անոր հա-
մաձայն՝ Լիպիա չ'ուզեր դիւանագիտական իր յարաբե-
րութիւնները խզել Լիբանանի հետ:

ՊԱՅՄԱՆՅՈՒՄ ՄԷՋ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴԱՆԱԻՐ ՌԱՐԱԿՈՑԵՑԻՆ ՀՐԶՊԱԼԼԱՅԻ ԿԵԴՐՈՆ ՍԸ

Հարաւային Լիբանանի Պայտա բլուրին մօտ
դտնուող Հրզպալայի կեդրոն մը երէկ երկկոյնեան
մը բակոճուեցաւ իսրայէլեան օդանաւերու կողմէ: Ըստ
«ԱՅՓ» լրատու գործակալութեան՝ համաձայն շրջա-
նին մէջ Հրզպալայի հակաօդային մէկ կեդրոնը ամ-
բողջութեամբ քանդուած է, ստանալով հրթիռ մը:
Մարդկային վնասներու մասին ոչինչ հաղորդուեցաւ:
Միւս կողմէ, Հրզպալա երէկ յետմիջօրէին կրակ
բացած է իսրայէլեան օդանաւերու վրայ, որոնք ցածէն
թռիչքներ կը կատարէին Սուրի վերեւ:

ԻՐԱՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԸՆԿՐՈՒՄՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ 25 ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԵՐԴՈՒՄԸ



Իրաքի փոխանցման
հանգրուանի առաջին կա-
ռավարութեան 25 նախա-
րարները երէկ կատարե-
ցին իրենց երդումը, պաշ-
տօնապէս ստանձնելով
նախարարութիւնները:
Նախարարները երդումը
կատարեցին Քուրդստանի
վրայ՝ խոստանալով իրենց
կարելին ընել լաւագոյն
ծառայելու եւ պաշտպա-
նելու Իրաքն ու անոր ժո-
ղովուրդը:

Կառավարութիւնը,
որուն կազմը յայտարար-
ւած էր Երկուշաբթի օր,
կը ներկայացնէ Իրաքի
գլխաւոր համայնքները:
Նախարարները հաշուե-
տու պիտի ըլլան իշխող
խորհուրդին: Փոխանցման
հանգրուանի կառավա-
րութեան հիմնական գոր-
ծը պիտի ըլլայ պատրաս-
տելու կազմակերպել ընտ-
րութիւնները, որոնք
պէտք է կայանան յառա-
ջիկայ տարուան ընթաց-
քին:
Միւս կողմէ, Լեհաս-
տան երէկ դարձաւ երրորդ
երկիրը, որ կը ստանձնէ
Իրաքի մէկ շրջանի ապա-
հովութիւնը՝ Միացեալ
Նահանգներու եւ Բրի-
տանիոյ կողմէն: Լեհաս-
տան ստանձնեց հակակշի-
ռը Բարեյոնի նահանգին:
Յանձնումի եւ ստանձնու-
մի արարողութեան ներ-
կայէր Լեհաստանի պաշտ-
պանութեան նախարարու-
թիւնը:
Ամերիկեան ուժերը
Պաքուստանի շրջանին մէջ
ձեռնարկեցին Սատամ
Հիւսէյնի բանակին բարձ-
րաստիճան զինուորական-
ներէն՝ Նասայթ Ժասէմ

ԸՍՏ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ

ԳԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻՆ ՊԻՏՏԵՆ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ
Սարգսեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթաց-
քին երէկ յայտնեց, թէ կը նախատեսուի յառաջիկայ
տարի աւելցնել Հայաստանի պաշտպանութեան մար-
զին պիւտճէն: Ըստ նախարարին, բաղադրամասը այս
տարուան, պաշտպանութեան մարզին համար 2004ի պե-
տական պիւտճէին մէջ նկատի պիտի առնուի աւելի մեծ
գումար:

Սարգսեան յատկ թիւեր չէ տուած, սակայն տեղե-
կացուցած է, թէ հայկական բանակի կարիքները հոգա-
լու համար կը մտածուի հայկական արտադրութիւննե-
րու քանակը բարձրացնել:

Սերժ Սարգսեան դիտել տուած է, թէ 2003ին պաշտ-
պանութեան մարզի ծախսերը կազմած են 44,3 միլիար
դրամ (75,6 միլիոն տոլար), որ կը համապատասխանէ
2003ի պետական պիւտճէի աւելի քան 13 առ հարիւրին:

ԵՐԵՒԱՆ - ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐՆԵՐԸ ԿԸ ՆՈՐՈԳՈՒԻՆ

Լեւոնային Ղարաբաղի անկախութեան 12ամեակին
առիթով Ստեփանակերտ գտնուող Հայաստանի վար-
չապետ Անդրանիկ Մարգարեան եւ Լեւոնային Ղարա-
բաղի վարչապետ Անուշաւան Դանիէլեան ստորագրած
են արձանագրութիւն մը, որուն միջոցով երկու պե-
տութիւններու կառավարութիւնները կը հաստատեն
իրենց պատրաստակամութիւնը՝ շարունակելու Սեպ-
տեմբեր 2000ին եւ Օգոստոս 2001ին ստորագրուած «Հա-
յաստանի Հանրապետութեան եւ Լեւոնային Ղարաբաղի
Հանրապետութեան կառավարութիւններու համագոր-
ծակցութեան միջոցառումներու» ծրագիրներու իրա-
կանացումը, խորացնելու Հայաստանի եւ Լեւոնային Ղա-
րաբաղի միջեւ ձեւաւորուած տնտեսական յարաբերու-
թիւնները, աջակցելու Լեւոնային Ղարաբաղի տնտեսա-
կան աճի ապահովման ու ընկերային - տնտեսական
զարգացման, ամրապնդելու երկու պետութիւններու
կրթութեան, մշակոյթի մարզերու միասնականու-
թիւնը:

Արձանագրութեան ստորագրման հիման վրայ հա-
մապատասխան յանձնարարականներ տրուած են նա-
խարարներու:

Շար.ը՝ էջ 10

ԺՈՐԺ ՀԱՌԻ ԱՅՅԵԼԵՅ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԱԿՈՒՄԲ

Լիբանանի Համայնավար կուսակցու-
թեան նախկին ընդհանուր քարտուղար
Ժորժ Հաւրի այցելեց «Սարդարապատ»
ակումբ եւ տեսակցութիւն ունեցաւ Հ. Յ. Դ.
Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ընկեր-
ներուն հետ:

Հաւրի արժեւորել էր ընդհանրապէս
լիբանանահայ գաղութին եւ յատկապէս Հ.
Դ. Դաշնակցութեան դերակատարութիւնը
լիբանանեան քաղաքական կեանքին մէջ,
ներկայացուց իր ծրագիրը, որ կը վերաբերի
ներկայիս անկախ քաղաքական դաշտին մէջ
գործող պանապան ուժերու միջեւ երկխոսու-
թիւն ստեղծելուն: Ան խօսեցաւ այս առու-
մով համագումարի մը կազմակերպման
անհրաժեշտութեան մասին:

Կեդրոնական Կոմիտէի ընկերները դի-
տել տուին, որ Հ. Դ. Դաշնակցութիւնը միշտ
կողմնակից եղած է հակադիր հոսանքնե-
րու միջեւ երկխոսութեամբ տարակարծու-
թիւնները լուծելու գաղափարին եւ թէ միջ-
համայնքային համակցութիւնն ու քաղա-
քական ուժերու միջեւ համախոհութեան
անհրաժեշտութիւնը կազմած են առանցքը
իր քաղաքական ուղեգիծին:

ԱԶՐՊԵՅՄԱՆ

ԻԼՀԱՄԱԼԻԵԻ ԱՆՈՒՂՂԱԿԻՕՐԷՆ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ ԹԷ ՄԻԱԿ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԵՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ

«Մետիամաքս» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, թէ Ազրպէյճանի վար-
չապետ Իլհամ Ալիեւ յայտարարած է, որ եթէ իր հայրը՝ նախագահ Հայտար Ալիեւ
առողջական պատճառներով չ'կարենայ մասնակցել Հոկտեմբեր 15ի նախագահա-
կան ընտրութիւններուն, ապա ինք պիտի ըլլայ իշխող «Ենի Ազրպէյճան» կուսակ-
ցութեան միակ թեկնածուն: Ի. Ալիեւ այս յայտարարութիւնը կատարած է ընտրա-
կան քարոզարշաւի իր առաջին ելոյթին ընթացքին: Միաժամանակ ան յոյս յայտնած
է, թէ Հայտար Ալիեւի առողջական վիճակը կը բարելաւուի եւ Ազրպէյճանի ժողո-
վուրդը զայն կը վերընտրէ նախագահ:
Նշենք, որ Հայտար Ալիեւ «Ենի Ազրպէյճան» կուսակցութեան թեկնածուն է
նախագահական յառաջիկայ ընտրութիւններուն, իսկ Իլհամ Ալիեւ առաջադրուած
է նախիջեւանէն՝ նախաձեռնող խումբի մը կողմէ:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒ ԶԱՐՏԵՍԻՆ ԳԵՈՎ

ԱՊՈՒ ՌՈՒՏԱՅՆԱ ԱՆՈՒՂՂԱԿԻՕՐԷՆ ԿԸ ՀԱԿԱԴԱՐՁԷ ԵԱՍԷՐ ԱՐԱՖԱԹԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Պաղեստինեան իշ-
խանութեան նախա-
գահ Եասէր Արաֆաթի
խորհրդատու Նապիլ
Սպու Ռուտայնա երէկ
վերահաստատեց, որ
պաղեստինցիները
յանձնառու կը մնան
խաղաղութեան ճամ-
բու քարտէսին: Ապու
Ռուտայնա կը հակա-
դարձէր այն յուրե-
րուն, ըստ որոնց՝ Արա-
ֆաթ յայտարարած է,
թէ «քարտէսը մեռած
է»: Ապու Ռուտայնա
ըսաւ, որ պաղեստին-
ցիները կը յարգեն խա-
ղաղութեան յիշեալ

ծրագիրը, որ կը շարու-
նակէ գոյութիւն ունե-
նալ:
Արաֆաթ Սի. Էն.
Ապու Ռուտայնա
ԷՆ.Ի հետ ունեցած
հարցազրոյցի մը ըն-
թացքին (առանց պատ-
կերասփոռումի) ըսած է,
թէ խաղաղութեան
քարտէսը մեռած է՝ Իս-
րայէլի պինուորական
յարձակումներու
պատճառով:

Ապու Ռուտայնա
մերժեց ուղղակի մեկ-
նաբանութիւն մը կա-
տարել Արաֆաթի նկա-
տողութեան մասին,
սակայն ան կոչ ուղղեց
միջազգային քառեա-
կի անդամներուն՝
Միացեալ Նահանգներու,
Ռուսիոյ ՄԱԿի եւ Եւրո-
պական Միութեան,
ճիգ չ'խնայելու գոր-
ծադրութեան դնելու
համար խաղաղութեան
քարտէսը եւ պարտիզ
կանգնի պաղեստինցի
ժողովուրդին Իսրայէլի
դէմ, որ կը փորձէ կոր-
ծանել խաղաղութեան
քարտէսը:

Խաղաղութեան
քարտէսի գործադրու-
թիւնը պահանջեցին
նաեւ Ռուսիա եւ Մէր-
տական Արաբիա:
Ռուսիոյ արտաքին
գործոց նախարար
Իկոր Իվանով, որ հան-
դիպում մը ունեցած էր
Միւստայնա Արաբիոյ
գահաժառանգ իշխան
Ապտալայի հետ,
ըսաւ, որ քարտէսը իս-
րայեան միջոցա-
նում մըն է դուրս գա-
լու համար վայրագու-
թեան այիթէն եւ յու-
ծում մը գտնելու հա-
մար պաղեստինեալիս-
րայէլեան տագնա-
պին:

ՌՈՒՇԻՆԿՈՐԸ
ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆ
ԿԸ ՊԱՇՏԱՆԸ
ԱՐԱՅԱՐԸ
ԱՐՏԱՅԵԼՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ

Միացեալ Նահանգ-
ներու արտաքին գոր-
ծոց նախարարութիւնը
յստակացում կը պա-
հանջէ Իսրայէլէն՝
Արաֆաթը արտաքե-
լու յայտարարութեան
մասին: Իսրայէլի
պաշտպանութեան

նախարար Շաուլ Մո-
ֆալ Երեքշաբթի օր
ըսած էր, թէ Իսրայէլ
սխալ մը գործեց երկու
տարի առաջ, երբ չար-
տաքեց Արաֆաթը:
Արտաքին գործոց
նախարարութեան
բանբերը ըսաւ, որ
Ուաշինկթըն կ'ուզէ
իմանալ, որ Մոֆալ իր
պիտակաւ կարծիքը
չ'իտեղ կու տան, որ եթէ
նախարարութեան պաշ-
տօնական կեցուածքը
կը ներկայացնէր: Ուա-
շինկթըն դէմ կը կանգ-
նի Արաֆաթի ար-
տաքսման ծրագիրին:

ԱՊՊԱՍ
ԿԸ ՊԱՏՊԱՏՈՒԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ՆԻՍՏԻՆ

Պաղեստինցի վար-
չապետ Մահմուտ Ապ-
պաս այսօր խորհրդա-
քանին պիտի ներկա-
յացնէ իշխանութեան
հարիւր օրուան իր
նուաճումները: Ապ-
պաս, որ իշխանու-
թեան համար սուր
պայքար մը կը մղէ
Արաֆաթի դէմ, խորհր-

դարանին մէջ պիտի
արտասանէ ձառ մը,
որ պիտի խօսի կառա-
վարութեան իրագոր-
ծումներուն մասին:

Կարգ մը աղբիւրներ
կ'ակնկալեն, որ Ապ-
պաս վստահութեան
բանբերը ըսաւ, որ
Ուաշինկթըն կ'ուզէ
իմանալ, որ Մոֆալ իր
պիտակաւ կարծիքը
չ'իտեղ կու տան, որ եթէ
նախարարութեան պաշ-
տօնական կեցուածքը
կը ներկայացնէր: Ուա-
շինկթըն դէմ կը կանգ-
նի Արաֆաթի ար-
տաքսման ծրագիրին:

ԹԻՍՐԱՅԷԼԵԱՆ քա-
նակին հրահանգուած
է յարգանքով վարուիլ
պաղեստինցի քաղա-
քայիններու հետ, հա-
յաբողոք «Վարէց»
օրաթերթը, որ աւել-
ցուց, որ այս ուղղու-
թեամբ շարք մը թելադ-
րանքներ փոխան-
ցուած են քանակին:
(ԱՅՓ)

ՊՐԵՍԻՍԻԱ

ՊԵՐՐԻ, ՍՈԼԱՆԱ, ՔԱՏՏՈՒՄԻ ՅԱԶՈՐԴԱԲԱՐ ԵՐԱՏԱՊ ԸԱՐՑԵՐ ԱՐԾԱՐԾԵՑԻՆ ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏԻ ԸԵՏ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լախուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերին, որուն հետ քննարկեց հիմնական երկու հարցեր՝ իմամ Մուսա Սատրիի առեւանգման թղթածրարը, ինչպէս նաեւ բարեկարգումները:



Սատրիի առեւանգման գծով Պրերիի բաւա, որ նախագահ Լախուտ Կիւր տեղեակ պահած է, թէ որոշ ուղղութիւններ տուած է արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտի՝ այս հարցին գծով:

Սատրիի առեւանգման գծով Պրերիի բաւա, որ նախագահ Լախուտ Կիւր տեղեակ պահած է, թէ որոշ ուղղութիւններ տուած է արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտի՝ այս հարցին գծով: Անորադրանալով բարեկարգումներու փշոտ թղթածրարին, Պրերի յայտնեց, որ նախագահ Լախուտի հետ քննարկած է ներքին անվտանգութիւնը, տարեկան արձակուրդէն ետք գումարուելիք կառավարութեան տառաջին նիստին առնչուող կէտեր, ինչպէս նաեւ խորհրդարանի գործունէութեան կապուած խնդիրները:

ՄԱՀԱԶԴ

Տիար Ներսէս Սարգսեան եւ գաւազները՝ Յակոբ եւ Մայտա Տէր եւ տիկին Անդրանիկ Սարգսեան եւ գաւազները Տէր եւ տիկին Գէորգ Սարգսեան եւ գաւազները Արթ. Տ. Վաչէ քնն. Թադոյեան Տէր եւ տիկին Մովսէս Սարգսեան եւ գաւազները Տէր եւ տիկին Սարգիս Սարգսեան եւ գաւազները Տէր եւ տիկին Յակոբ Թադոյեան եւ գաւազները Տիկին Ժորժէթ Եսգուպեան եւ գաւազները եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, քրոջ եւ Հարազատին՝

ՈՎՍԱՆՆԱ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ (Ծնեալ՝ ԵԱԳՈՒՊԵԱՆ, Ճարպալու, 1930ին)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 3 Սեպտեմբեր 2003ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատե հիւանդութեան: Թուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 4 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, ուր կ'է հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ: ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին գաւազները Անդրանիկ Սարգսեանի բնակարանը, Ժեմբաուի, Գալիկի «Սի. Էմ. Սի.» հիւանդանոցին կից, Ուրբաթ 5, Շաբաթ 6 եւ Կիրակի 7 Սեպտեմբերին:

ՄԱՀԱԶԴ

Տիար Խաչատուր Մարկոսեան եւ գաւազները՝ Վարանդ եւ Ռուպինա Գեղբ. Տ. Չարեհ Արթ. Ազնաւորեան Տիկին Անթառամ Ազնաւորեան Տէր եւ տիկին Յակոբ Ազնաւորեան Տէր եւ տիկին Արամ Թորոզեան եւ գաւազները Տէր եւ տիկին Ժագ Վարպետեան եւ գաւազները Տէր եւ տիկին Մարտիրոս Բախտիկեան եւ գաւազները Տէր եւ տիկին Նշան Ազնաւորեան եւ գաւազները Տիար Մինաս Տէր Խաչատուրեան եւ գաւազները Տիկին Արտեմիս Մարկոսեան Տէր եւ տիկին Վազգէն Մարկոսեան եւ գաւազները Տէր եւ տիկին Վաչէ Մարկոսեան եւ գաւազները եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, դստեր, քրոջ, մօրաքրոջ, հարսին եւ Հարազատին՝

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ (Ծնեալ՝ 1957ին)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 2 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Պապատայի հիւանդանոցին մէջ, յետ կարճատե հիւանդութեան: Թուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 3 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Սիւրի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, ուր կ'է հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ: ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ ՔԱՀԼԻ Ետեւի փողոցը, Հինգշաբթի 4, Ուրբաթ 5 եւ Շաբաթ 6 Սեպտեմբերին: ● Կը խնդրուի փոխան Ժողովպահի Գուրապուրի Բիւրոն կատարել Ազգ. Եղիշէ Մահուկեան երկրորդ փորձարանի սաներու ֆոնդին:

կառավարութեան մէջ: Նախագահ Լախուտ աւելցուց, որ միջազգային ընտանիքի պայմանաժամը սահմանափակ է՝ կիրարկելու միջազգային կանոնները: Ան կոչ ուղղեց ՄԱԿին ճշդելու Խորաշէլի վրայ, որ պէտք է վերջ տայ պաղեստինցի ժողովուրդին դէմ իր բռնարարներուն:

Սոյանա իր կարգին դրուատեց նախագահ Լախուտի արդար մտաւ՝ վախութիւնը եւ աւելցուց, որ լաւատես է իրաքեան տագնապի լուծման գծով կատարուած քաղաքական շարք մը խորհրդակցութիւններէն, որոնք իրաքեան տագնապի լուծման ի նպաստ են: Սոյանա անդրադարձաւ նաեւ պաղեստինեան տագնապին եւ շեշտեց, որ հարկ է ամէն ջանք ի գործ դնել ջաշըիցնելու համար խաղաղութեան ճամբով:

ՊԵՐՐԻ ՎԵՐԱՏԻՆ ԿԸ ԾԵՇՏԵ ԱՐԱԲԱԿԱՆ ՍԻԱՅԵԱԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերի երէկ խորհրդարանին մէջ վերահաստատեց, որ բարեկարգումներու աշխատանքը շարունակական է եւ աւելցուց, որ հարկ է անոնց գործադրութեան հսկող մարմիններուն եւ դատական իշխանութեանց ազատութիւնը յարգել: Պրերի արժանապատեց նաեւ երկկողմանի կառուցման շարք մը յարցեր, որ գրաստիչութեան յատուկ վայրերը հիւսիսային Լիբանանէն մինչեւ Հարաւային Լիբանան խառնուելու են ապօրինութիւններ արձանագրած են: անոնք երկկողմանի կառուցման ընկերութիւնները ուղղակի քաղաքացիները են՝ անտեսելով օրէնքը:

ԱԶԳ. Ե. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԵԳԻ Բ. ՓԱՓԱԶԵԱՆ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՆՏԻՆ

● Վարդուի Մարկոսեանի մահուան առիթով, Ազգ. Ե. Մանուկեան քոլէճի Դ. եւ Բ. դասարաններու ուսուցչական կազմը՝ 100,000 Լ. ո.:

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Նովամալորութեամբ՝ ԳԵՐԾ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Եպիսկոպոս) Նախագահութեամբ՝ ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ԱԼԵՔ ՏՈՒՄԱՆԵԱՆՆԵՐՈՒ Կազմակերպութեամբ՝ Ս. ՊՈՂՈՍ ԵՎԵՂԵՏԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԵՒ ԱԶԳ. ՅԱՆԱԶ - Գ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՔՈԼԵԳԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ Մասնակցութեամբ՝ Կալիպահայ երգիչ՝ ԳՕԳՕ ԱՍԱՅԵԱՆԻ ԵՒ «ՍՊԻՏԱԿ» նուագախումբին Տեղի կ'ունենայ Շաբաթ, 6 Սեպտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 9:00ն սկսեալ, «Քաղցն Այն Այնճար» ճաշարանին մէջ: Տոմսերը ստանալ Համազգայինի գրախանութն (Պուրճ Համուտ) եւ «Փանոս Լորէնց» հաստատութենէն:

ԽԱՒԻԷ ՍՈԼԱՆԱ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ ՕՊԵՅՏԻ ՄՕՏ



Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան ներկայացուցիչ Նալիէ Սոյանա երէկ այցելեց վարչապետ Ռաֆիկ Հարիրիի, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները, յատկապէս պաղեստինեան եւ իրաքեան տագնապներու զարգացումները: Սոյանա Գորաշէլի մէջ դարձաւ վարչապետ Հարիրիի ճաշի հիւրը:

Սոյանա Հանդիպում մը ունեցաւ նաեւ արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտի հետ: Քննարկուեցան շրջանային իրադարձութիւնները, որմէ ետք տեղի ունեցաւ մամուլի միացեալ ասուլիս մը: Սոյանա իր խօսքին մէջ անդրադարձաւ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին, ըսելով, որ անկախ կ'անցնի զգալուն հանգրուանէ մը, որուն ընթացքին ամէն ջանք ի գործ կը դրուի զայն կենդանի պահելու: Իրաքեան տագնապի լուծման ակնարկելով Սոյանա շեշտեց, որ իրաքեան տագնապի վերջնական լուծման եւ իրաքի կայունութեան միակ ու գլխաւոր դերակատարը ՄԱԿն է: Իր կարգին, Օպէյտ յայտնեց, որ Ե. Միութեան վրայ յոյսեր դրուած են՝ յաւելեալ աշխատանք տանելով Միջին Արեւելքի մէջ՝ կայունութիւն եւ խաղաղութիւն հաստատելու համար: Օպէյտ վերահաստատեց, որ Միջին Արեւելքի կայունութիւնը կախեալ է արդար եւ ամբողջական խաղաղութիւն հաստատելու պայմանէն, «Իսկ Խորաշէլ տակաւին կը շարունակէ մերժել այս լուծումը եւ կը դիմէ ժամանակի կորուստի առաջնորդող ամէն միջոցառումի»:

ՄԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԸ ՅԱՏԿԱՆՇՈՒԵՑԱԻ ԿԱՐԾՐ ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐՈՎ

Մարոնի Եպիսկոպոսներու Խորհուրդը, երէկ, գլխաւորութեամբ Սֆէյր պատրիարքին, Տիմանի մէջ գումարեց ժողով մը, որուն ընթացքին քննարկեց ներքին անվտանգութեան վերջին իրադարձութիւնները: Ժողովէն ետք Հրապարակուած հաշտօնական հարցազրուակութեան մէջ նշուեցաւ, որ ներքին անվտանգութեան զարգացումները կ'ընթանան վատէն վատագոյն ընթացքով: Հարցազրուակութիւնը նշեց նաեւ, որ իշխանութեան մակարդակի վրայ տիրող լարուածութիւնը կ'անդամալուծէ կառավարութեան աշխուժութիւնը եւ աւելցուց, որ գրաստիչութեան եւ համերաշխութեան պարագային հարկ է յարգել փոխադարձ իրաւունքները, շահերն ու յատկութիւնները: Հարցազրուակութիւնը ըննադատեց նաեւ պետութեան մէջ տիրող փտածութեան, մտաւոր, երկրորդականութեան մարդի տագնապին եւ կառավարութեան կողմէ իրեզրուած տուրքեր պարտադրելու քաղաքականութիւնը:

ՔԱՏՏՈՒՄԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարար Յարութ Քատտուի երէկ այցելեց արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտի, պաշտպանութեան նախարար Մահմուտ Համմուտի եւ կենսալորտի նախարար Յարութ Պուշիյի: Հանդիպումներուն քննարկուեցան պաղեստինեալիստիկեան եւ արաբեալիստիկեան տագնապներուն արձանագրած նորագոյն վարգացումները, ինչպէս նաեւ շրջանային խաղաղութեան հաստատման նպատակով խաղաղութեան ճամբու քարտէսի գործադրութեան հեռանկարները: Քատտուի շեշտեց, որ պաղեստինցի գաղթականներու տունդարձը օրինական է եւ իրաւունք, զոր պէտք է յարգել: Ան շեշտեց, որ պաղեստինեան բռնագրաւեալ տարածքներու վրայ իսրայէլի գոյութիւնը միակ պատճառն է շրջանային միջապահութեան ծաւալման եւ աւելցուց, որ պաղեստինցի ժողովուրդը կառուած կը մնայ իր դիմադրութեան՝ ինքիֆատային: Օպէյտ իր կարգին նշեց, որ Միջին Արեւելքի գործընթացին մէջ հարկ է նկատի ունենալ խաղաղութեան արաբական նախաձեռնութիւնը եւ հիմնուիլ Մատրիտի դաշինքին սկզբունքներուն վրայ: Ան կոչ ուղղեց իսրայէլի վրայ բանեցնելու ամերիկեան եւ եւրոպական ճշմարիտ միջազգային որոշումները գործադրել տալու նպատակով:

ԴԱՄԱՍԿՈՍ ԴԱՄԱՍԿՈՍ ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Անդրանիկ Գոգանյան եւ գաւազները Տէր եւ տիկին Կարպիս Գոգանյան եւ գաւազները Տէր եւ տիկին Պարգեւ Ընճոյեան եւ գաւազները Տէր եւ տիկին Սիմոն Սիմիդեան եւ գաւազները Տէր եւ տիկին Տիգրան Յակոբեան եւ գաւազները Նալչաճեան ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ Հարազատին՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳՈԶԱՆԼԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ 31 Օգոստոս 2003ին, Մ. Նա հանգուցեալ: Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Սեպտեմբերին Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, յաւերտ Ս. պատարագի: ● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԵՍ Ելոյթ կ'ունենայ ՓՕԼ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ Մասնակցութեամբ ԽԱԶԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻՆ Զիւր երգիչ՝ ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ ԸԱԲԱԹ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003, «Նապրի Այնճար» ճաշարանին մէջ: Սակ՝ 35 եւ 40 \$ Տոմսերը ապահովել Սթիւտիո Խաչիկ Մալխասեան, «Տիգրէր Եանկ»-ն եւ «Նապրի Այնճար» ճաշարանէն: Ըն. 08 - 620590, 03 - 790623:

ԱԶԱՏ ԱՐՅԱԽԸ...

«Ազատ Արցախը ողջունում է ձեռք: Ցուցա-
նակին վրայ այս կը կարգայ Արցախ այցելող իւ-
րաքանչիւր անձ, երբ մուտք կը գործէ «Իւր քաջ
որդուոց սուրբ արիւնով» ազատագրուած Ար-
ցախ:»

Տասներկու տարի առաջ, այս օրերուն, երբ
յայտարարուեցաւ Լեռնային Ղարաբաղի Հան-
րապետութեան անկախութիւնը, քիչ չէր թերա-
հաւատներու թիւը: Սակայն փաստը այն է, որ
Լեռնային Ղարաբաղի, հայոց պատմական Ար-
ցախ գաւառի մեծ մասը ազատագրուած էր ու
գործնական առումով միացած մայր հայրենի-
քին:

Պատմական ու քաղաքական շատ լուրջ նշա-
նակութիւն ունի Արցախի ազատագրումը, որով-
հետեւ 1920էն ի վեր առաջին անգամ ըլլալով է,
որ հայապատկան հողեր կ'ազատագրուէին ու
կ'անցնէին հայկական պետական գերիշխանու-
թեան տակ:

Արցախի հայապատկան ըլլալու փաստը չէ
վրիպած նաեւ ամերիկեան պետական շրջանակ-
ներու աչքէն: Սի. Այ. Էյ.Ի կողմէ աւելի քան
տասնամեակ մը առաջ կատարուած ուսումնա-
սիրութիւններ այդ փաստը կը նշէին աներկա-
յօրէն:

Ազգային ինքնիշխան գիտէ, թէ Ղարաբաղը եր-
բեք չէ պատկանած իրեն: Պարզի մէջ շատ լաւ
գիտեն, թէ նոյնիսկ երբ Ազգային կոչուած
պետութիւնը չկար, գոյութիւն չունէր քարտէսի
վրայ, Ղարաբաղը կը պատկանէր հայութեան:

Խորհրդային վերջին ղեկավար Գորբաչով
ինքն լաւ գիտէր այն փաստը, որ Ստալինի կա-
մայական որոշումով էր միայն, որ ստեղծուե-
ցաւ Լեռնային Ղարաբաղի «ինքնավար» մարզը
ու դրուեցաւ Խորհրդային Ազգային ինքնիշ-
խանութեան տակ:

Թուրքիա, որ աւելի քան տասնամեակ մը ի վեր
կ'ուզէ մասնակից ըլլալ խաղին, ինքնուրաքանչեւ
է այս իրականութեան: ԱՆՀԿՐ՝ ճնշումներ:

Հետեւաբար, հարցը փոխադրուած էր մէջ
չի կայանար, այլ՝ փաստը ընդունելու եւ առաջ
երթալու:

Լեռնային Ղարաբաղի այսպէս կոչուած հա-
կամարտութեան լուծումին հետամուտ ոչ հայ-
կական կողմերը պէտք է քաղաքականօրէն ըն-
դունին այս փաստը, քաջութիւն ունենան եւ
դրսեւորեն համապատասխան քաղաքական
կամք, որպէսզի միանգամընդմիջ լուծուի
խորհրդային իշխանութիւններու կողմէ տա-
նաձայնութեան առաջ արուեստականօրէն ստեղ-
ծուած այս կնիքը եւ արդար խաղաղութիւն
հաստատուի շրջանէն ետք:

ՎԱՍԷ ԲՐՈՒՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
«ՓԱՆԱՐՄԻՆԻԸՆ ԷՔՍՓՕ - 2003»
ՑՈՒՑԱՀԱՆ ԴԷՍ

22էն 24 Սեպտեմբեր Երեւանի մէջ տեղի ունենալիք
Հայաստան - Սփիւռք տնտեսական առաջին համաժող-
ովի շրջանակներուն համախորին մէջ բացումը պիտի
կատարուի «Փանարմինիւն Էքսփօ - 2003» առաջին հա-
մահայկական ցուցահանդէսը:

Ըստ Հայաստանի Առեւտրաարդիւնաբերական Տան
ցուցահանդէսներու բաժանմունքի պետ Աննա Յակոբ-
եանի, շուրջ մէկ ամիսէ ի վեր տեղի կ'ունենան ցուցա-
հանդէսին նախապատրաստական աշխատանքները:
Մինչեւ հիմա ցուցահանդէսին մասնակցելու դիմում
ներկայացուցած են արտադրող եւ ծառայութիւններ
մատուցող հայկական 100 ընկերութիւններ:

«Ցուցահանդէսին գլխաւոր նպատակն է կամուրջ
ստեղծել Հայաստան - Սփիւռք տնտեսական յարաբե-
րութիւններուն մէջ, ներկայացնել թեթեւ եւ ծանր ճար-
տարարութեան տեղեկատուական - արհեստագիտու-
թեան եւ այլ սպարէնցներու մէջ հայաստանաբնակ եւ
արտերկրի հայ գործարարներուն յաջողութիւնները,
անոնց ընձեռել չփայտ կարելիութիւն, խթանել ընկե-
րութիւններու միջեւ նոր համաձայնագիրներու կնքու-
մը», նշեց Ա. Յակոբեան:

Ցուցահանդէսին կը մասնակցին նաեւ՝ Հայկական
Զարգացման Գործակալութիւնը, Հայաստանի Արդիւ-
նաբերողներու եւ Գործարարներու Միութիւնը, Զրօ-
սաշրջութեան Զարգացման Հայկական Գործակալու-
թիւնը եւ այլ յառաջատար առեւտրական կազմակեր-
պութիւններ:

ՎԱՐԴԱՆ ՄՈՎՍԻՍԵԱՆ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ԴՐԱՄԱՏԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան
30 Օգոստոսին հրամանագիր մը ստորագրած է
Արթուր Զաւաղեանը Հայաստանի Կեդրոնական
Դրամատան խորհուրդի անդամի պաշտօնէն
ազատ կացուցելու մասին, վերջինիս պաշտօնա-
վարման ժամկէտի աւարտին պատճառով:
Հիմք ընդունելով «Հայաստանի Կեդրոնական
Դրամատան մասին» օրէնքը՝ նախագահ Ռ. Քո-
չարեան նոյն օրը հրամանագիր մը ստորագրած
է Վարդան Մովսիսեանը 5 տարուան պաշտօնա-
վարման ժամկէտով Հայաստանի Կեդրոնական
Դրամատան խորհուրդի անդամ նշանակելու
մասին:

ԿԱՐԾԻՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Խօսինք դարձեալ գա-
ղափարի ազատութեան
մասին: Գաղափարի կամ
մտածումի ազատութիւն:
Թերեւս՝ համոզումի
ազատութիւն: Ժողովրդ-
ազատութեան սա դա-
րաշրջանին ամէնէն շատ
ծամծմուած բառն է այս:
Գաղափարի ազատու-
թիւն: Ամէն մարդ ազատ
է իր անկախ մտածումը
ու նենհալու: Ո՛չ մէկը կը
պատժուի կամ պէտք է
պատժուի իր մտածումին
համար: Ամէն մարդ պէտք
է յարգէ դիմացինին մտա-
ծումը:

Եթէ մէկը ձեռքի նման չի
մտածեր, եթէ մէկը ձեռքի
տարակարծիք է, դուք
ընաւ իրաւունք չունիք
զինք արհամարհելու: Զըլ-
լոյ՝ որ այսպիսի սխալ մը
գործէք: Քաղաքակիրթ
մարդը չի կրնար արհա-
մարհել դիմացինին մտա-
ծումը: Պիտի հանդուրժէ,
այլ նաեւ պիտի յարգէ:
Գլխարկը պիտի հանէ ու
պիտի ըսէ: «Ես ընաւ հա-
մակարծիք չեմ ձեզի հետ,
բայց կը յարգեմ ձեր մտա-
ծումը»: Զեր մտածումը
ծայրաստիճան տխմար ու
անիրատես մտածում մըն
է, բայց կը յարգեմ ձեր
այդ մտածումը»:

Ամէն մարդ ազատ է իր
մտածումը ունենալու:
Մարդը մտածող եղջ մըն
է: Եւ այս է մարդուն մե-
ծութիւնը: Մարդը կը
մտածէ եւ ամէն նիւթի
չուրջ ունի իր սեփական
գաղափարը, իր սեփական
մտածումը:

Մարդը ի՞նչն է, որ
ստեղծած է այդ սեփական
մտածումը, թէ ուրիշ մը
փոխ առած է: Ան, որ հի-
մա կատարողն էր հակա-
ճառէ ձեզի, ան, որ հիմա
ձեր բաժնետերուն ճիշդ հա-
կառակը կը պնդէ, մտա-
ծումի ազատութիւն ունի,
բայց թերեւս ինքն է, որ
ստեղծած է այդ մտածու-
մը: Մարդը մտածող եղջ
մըն է, բայց ատիկա չի
նշանակեր, որ կը մտածէ
եւ միշտ նոր գաղափար-
ներ կը ստեղծէ: Կրնայ
մտածել ու նոր գաղա-
փարներ ստեղծել, բայց
թիչեր միայն այդպէս
ստեղծած է այդ մտածու-
մը: Մարդը մտածող
գաղափարներ չի ստեղ-
ծեր: Որովհետեւ մտածելը
տարբեր բան է, գաղափար
մը ստեղծելը՝ տարբեր
բան: Ամէն մարդ ամէն օր
անդադար կը մտածէ,
բայց թիչ անգամ է, որ նոր
ու հետաքրքրական մտա-
ծում կը ստեղծէ: Հա-
կառակ ատոր, ամէն
մարդ ամէն նիւթի շուրջ
որոշ կարծիք մը, մտա-

ծում մը ունի, որովհետեւ
թերթ կը կարդայ, որովհե-
տեւ հեռատեսիլ կը դիտէ,
որովհետեւ շարժանկար
կը դիտէ, որովհետեւ բա-
րեկամներու հետ կը խօսի
ու անոնց ազդեցութեան
տակ կը մնայ, որովհե-
տեւ... Ամէն մարդ ամէն
նիւթի մասին կարծիք մը
ու մտածում մը ունի,
բայց զայն ուրիշ է մը
ստացած է: Քիչեր միայն
առաջ կը քշեն գաղափար
մը, գոր ուրիշն ստացած
չեն, գոր իրենք ստեղծած
են: Մեր դարաշրջանին
դժուար է չմնալ ուրիշնե-
րու գաղափարներուն ազ-
դեցութեան տակ: Ուրիշի
մը գաղափարին ազդեցու-
թեան տակ մնալ, այդ գա-
ղափարը տրամաբանա-
կան գտնելով զայն իւրացը-
նել, զայն իր գաղափարը
դարձնել, յետոյ զայն
պաշտպանել, ասիկա ահա-
նասիկ մարդուն ըրածն է:
Եւ այդ է, որ ահա ստիկ
կը նշանակէ սեփական
մտածում ու կարծիք ու-
նենալ, եւ ուրիշներէ փոխ
առնուած այդ սեփական
կարծիքի ազատութիւնն
է, որ կը պահպանուի ամէ-
նուրեք:

Հոգ չէ, թէ այստեղ հա-
կասկան կէտ մը կայ:
Ուրիշի գաղափարին ազ-
դեցութեան դրժումը չէ՞,
գաղափարի ազատութեան
ժխտումը չէ՞: Եթէ դու
իմ մէկ մտածումիս ազդե-
ցութեան տակ մնայած ես,
կամ եթէ իմ մտածումս
քեզի պարտադրած եմ,
ասիկա մտածումի բռնա-
րում մ'ընէ՞: Նշանակե՞ր
արդեօք: Ես եթէ իմ մտա-
ծումովս յուսացեր եմ քու
ուղեղդ, այդ պարագային
ես քու մտածումիդ ազա-
տութիւնդ չեմ մ'պղծած:

Քիչ մը պղծած եմ, այո՛:
Բայց ընելիք բան չկայ:
Եթէ դու իմ այդ գաղա-
փարս ընդունած ես գի-
տակցաբար, այդ մտածու-
մը այլեւս քու կը նկատու-
ի եւ դու այդ մտածու-
մը ազատօրէն գործածե-
լու ու արտայայտելու
ազատութիւնն ունիս: Ո՛չ
ոք կրնայ առարկել քեզի՛
ըսելով, որ այդ մտածումը
քու սեփական մտածումդ
չէ: Այդ մտածումը այլեւս

անոր սեփական մտածու-
մը կը նկատուի: Քանի՞ հո-
գի իր հագած հագուստին
դերձակն է: Ամէն մարդ
ուրիշին կարած հագուս-
տը կը հագնի: Այն վայր-
կեանէն սկսեալ, երբ ես
հագուստը հագնիմ, այդ
հագուստը իմս պիտի
նկատուի: Պիտի կարենամ
հպարտանայ այդ հագուս-
տին գեղեցկութեամբ,
կարծես թէ դերձակը ես
եղած ըլլայի:

Աւելի յստակ խօսինք:
Կարծիքի ազատութիւն
ըսուած, կարծիք մը ընտ-
րելու ու այդ կարծիքը իւ-
րացնելու ազատութիւնն
է: Ո՛չ ոք կ'անդադառ-
նայ, որ աշխարհի բոլոր
չուկաներուն վրայ ծախ-
ւած ապրանք մըն է կար-
ծիքը: Կը գտնես զայն ու
զայն քու կը դարձնես:
Այդ վայրկեանէն սկսեալ
այ դուն այդ կարծիքին
թէ՛ տէրն ես, թէ՛ պաշտ-
պանը, թէ՛ իրաւատէր:

Հոս պահ մը հարց
տանք: Ի՞նչն անպատե-
հուութիւն կայ մէկու մը
կարծիքը փոխ առնելու ու
այդ կարծիքին պաշտպա-
նը հանդիսանալու մէջ:
Մարդը եթէ փոխ առեր է
այդ կարծիքը, կը նշանա-
կէ, որ համամիտ եղեր է
այդ կարծիքին: Իւրացու-
ցեր է զայն: Ի՞նչ անպա-
տեհութիւն կայ ասոր մէջ:

Շատ կարեւոր անպա-
տեհութիւն մը կայ: Աշ-
խարհի բոլոր կուրսերն ու
հակամարտութիւնները
ասկէ ծնունդ կ'առնեն:
Որովհետեւ մտածում ու
կարծիքը արտադրող ինչ-
ինչ խմբաւորումներ կան,
որոնք մարդոց նախ կու
տան կարծիք ու մտա-
ծում, վերջն այ՝ զէնք մը,
որպէսզի քու գտնես այդ
կարծիքին ու մտածումին
ոպարիկը, պայքարող ու-
ժը, գինուրը: Զինուոր մը
զէնք պիտի քաշէ հակա-
դիր կարծիքին ու մտա-
ծումին վրայ: Եւ մինչ աշ-
խարհի բոլոր դատարան-
ները պիտի յարգեն իմ
մտածումիս ազատու-
թիւնը, այդ գինուրը
ընաւ պիտի չարգէ մտա-
ծումի իմ ազատութիւնս
ու պիտի կրակէ վրաս:

Ռ. Հ.

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ
ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծա-
նուցումներ հրատարակել փափաքողներէ կը
խնդրուի ծանուցումի բնագիրը ընթերցմի գիրով
(հաստատութեանց պարագայի՝ նախընտրաբար
պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներ-
կայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենյակը:

Մասնագիտութիւնդ
ՈՍԿԷ ԱՊԱՐԱՆՋԱԴ Է
ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ
դիմացդ կը բանայ

Ա.- Համակարգիչի
ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ԵՎ
ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ
մասնագիտութիւնը,
ՊԵՏԱԿԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆՈՎ:



Բ.- Ոսկերչութեան ու
կաղապարաշինութեան
վարպետ ըլլալու համար,
տարիներ եւ շատ
ճիգ է պէտք:

ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ՝ ամենակարճ ճամբան է
այդ նպատակին հասնելու,
առաւել՝ վկայեալ վարպետ ըլլալու համար:
Արձանագրութիւն՝ ամէն օր

ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ.՝ Տորա՝ հեռ. 01/251320

ՀԱՅՐԻԿԻՍ

Կեանքից հեռացաւ անժամանակ. նա, որ այդքան սի-
րում էր կեանքը, այդքան կեանքով լի էր եւ այդքան
հաւատով...
Գլխաւոր Յարութիւնեան. ամէն ոք այս անունը
լսելիս, ակամայ ժպտում է՝ յիշելով այս բարի համով
հոտով, զուարճալի պատմութիւններ անող «Գլխա պա-
պիկին»:

Մտուել է 1928 թուականին, գաւառում, նախնական
կրթութիւնն ստանալուց յետոյ ընդունուած է գերա-
զանց աւարտում է Երեւանի Գեղարուեստական թատե-
րական Համալսարանի գերասանական բաժանմունքը:
Այնուհետեւ աշխատանքի է անցնում «Հայֆիլմ» շար-
ժապատկերի սթիւտիոյում, ուր աշխատում է երկար
տարիներ, սկզբում իրրեւ ընթացիկ, իսկ այնուհետեւ
իրրեւ կրկնօրինակման բաժնի առաջնակարգ ընթաղ
րիչ:
Աշխատել է բազմաթիւ ժապաւէններում «Լալվարի
որսը», «Հիւսիսային ծիածան», «Ճանապարհ դէպի
կրկէս»: Որպէս գերասան՝ նկարահանուել է մի շարք
հայկական ժապաւէններում («Մոլոր շահում», «Միւ-
թար Սպարապետ» եւ այլն): Նրան իր ամբողջ կեանքում
օգնել է հայերէնի անթերի իմացութիւնը եւ ամբողջ
կեանքում նրան ուղեկցել է թուրքի ռեժիսորը:
Գրել է նոթեր շարժապատկերի յայտնագործումից
մինչեւ նրա գործիչներին, եւ մասնաւորապէս՝ հայ շար-
ժապատկերի պատմութեան մասին: Իր մարդկային տե-
սակով լինելով հետաքրքրական անձ, սկսում է գրչին
գուարճալի եւ հետաքրքրական պատմութիւններ՝ կապ-
ւած հայ արուեստի ականաւոր գործիչներին, գրողնե-
րին, երաժիշտներին, գերասաններին հետ (վերջերս նաեւ
Պէյրուսում վաճառուող «Մեր գուարճախօս այրերը»):
Բազմիցս ունեցել է ելոյթներ առախոյով, հեռուստա-
տեսութեամբ՝ լինի զա հրապարակասուսութիւն, թէ՛
պարզապէս ուրախ, կատակախառն հարցազրոյց, որ-
տեղից միշտ պատուով էր դուրս գալիս: Այդպիսի մարդ
էր՝ տեսակով իսկական արուեստագետ:

Մեր սիրելի ու բարի. քո պայծառ յիշատակը միշտ
կը մնայ բոլորի սրտերում:
Քո դուստրը
ՆԱՐԻՆԷ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՏԱՐԵԼԻՑԻ ԽՈՒՇԵՐ

ՄԵՐ ՈՒՍՈՒՅԻՉԻՆ՝
ԱՐՄԵՆԱԿ ԳՐԱԾԵԱՆԻ
ՄԱՃՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Անցեալ տարի հողին յանձնեցինք գաղափարապաշտ
եւ նուիրեալ դաստիարակ - ուսուցիչներուն վերջին
«մոտիկանը»: Մեր սերունդի տղոց կողմէ կ'ուզեմ խոճի
տուրքս տալ նաեւ պրն: Արմենակին, ինչպէս տուեր էի
իր սրտակից «Երկուսորակին», պրն: Տիգրան Սեֆեր-
եանի մահուան քառասունքին առիթով:

Տարիներ առաջ Քարանթիւնայի Ազգային Մեսրոպ-
եան վարժարանին երկու սիններն էին անոնք, աշա-
կերտներուն վրայ գուրգուրացող, ոչինչ կը խնայէին
ինք սերունդին մտաւոր ու բարոյական զարգացման
ի մեղքի:

«Ով յարկ խոնարհ դուստ փայլ չունիս,
«Բայց մէջը կ'ապրի հոգին ցեղիս»
Բազմաբանաբար Արմենակ Գրաճեանին բառերն են
ասոնք՝ առնուած դպրոցին քայլերգէն, որուն դանա-
ւորումն ալ իրն էր:

Պրն. Արմենակէն սորվեցանք սիրել հայ գիրն ու
գրականութիւնը: Պատարագիչ քահանայի մը նման կը
վերանաբար այդ դասապահներուն ընթացքին: Շարադրու-
թեան մրցումներ կը կազմակերպէր դասարանին մէջ՝
եւ իր սահմանափակ եկամուտէն կը հայթայթէր մրցա-
նակներ: Հայ գրականութեան սէրը մեր մէջ աւելի բոր-
րօքելու նպատակով մեզ կը քաջալերէր ունենալ տես-
րակներ, ուր պիտի արձանագրէինք տուեալ գրողին
կենսագրութիւնը եւ անկիւն մը գետեղել անոր նկարը:
Հանազան առիթներով, սակայն՝ ընդհանրապէս
ամաւերջի հանդէսներուն, համարձ, կը պատրաստէր
ինքնազիր ներկայացումներ եւ պատշաճ ոտանաւոր-
ներ, որոնք հետագային ամփոփուեցան մէկ հատորի
մէջ՝ «Մանուկներու բեմը» խորագրով:

Պրն. Արմենակ նաեւ հեթիթագիր էր: Իր ստորա-
գրութիւնը կ'երեւար լիբանանահայ մամուլին մէջ: Նա-
խակրթարանին մէջ մեզի համար մեծագոյն անակնա-
լը եղաւ, երբ օր մը, հանդիսութեան մը առիթով, աշա-
կերտութեան դիմաց պանձոյի վրայ նուազեց կոմիտա-
սի «Միրանի ծառ»ը: Անկէ տարիներ առաջ արդէն մե-
զի սորվեցուցեր էր երաժշտական տօ - ռէ - մին: Մտա-
ծեր էի, թէ կ'ար արդեօք բան մը, որ այս մարդը չէր
գիտեր: Պատասխանը չունեցայ: Բայց պրն. Արմենակը
իմ մտապատկերիս մէջ մնաց իրրեւ օրինակելի, նուիր-
եալ ուսուցիչը, որ շատ բան գիտէր եւ իր գիտցածները
անվերապահօրէն տուաւ իր աշակերտներուն:

Սակայն, հազար ափսոս, որ իր կենդանութեան ոչ
ոք մտածեց յարգանքի դոյզն արտայայտութեամբ մը
յորելեան մը տունը:

Իրմէ ինծի մնացած միակ շօշափելի յիշատակը կը
կազմէ մարգարտաշար, սքանչելիօրէն գեղեցիկ իր ձե-
ւագիրը, որով անունս գրած է նախակրթարանի վկա-
յականիս մէջ:

Այս քանի մը տողերը թող կազմեն յարգանքի եւ
երախտագիտական յամեցած տուրք մը Հայ Ուսուցի-
չին:

Ս. ԳՈՉ

www.hamazkayin.com



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂՔԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ԽԱՒԱՐԻՆ ՄԷՉ ՄԹՈՒԹԻՒՆ

Լիբանանի ընկերային եւ տնտեսական դժուար պայմաններուն պատճառով քաղաքացիները տարիներէ ի վեր կը խարխափին խաւարին մէջ եւ կը փորձեն գտնել լոյսի նշոյլ մը եւ կառչիլ ու առաջնորդուելի անով:

Երկրին մէջ տիրող սղութիւնը, անգործութիւնը, արտագաղթը եւ անոնց պատճառած ընկերային գանազան հարցերն ու մտահոգութիւնները լիբանանցիները նետած են հոսանքի մը մէջ, ուրկէ դուրս գալն ու պայծառ ուղին գտնելը բաւական դժուար ու անկարելի կը դառնայ հետըզհետէ:

Բարոյական այս խաւարին կողքին, վերջին ամսուան ընթացքին աւելցաւ խակական մթնոլթիւնը, ելեկտրականութեան հոսանքի ընդհատումը, որ քաղաքացիները նետեց յուսահատութեան գիրկը:

Մարդիկ տնտեսական տագնապալի օրերուն իրենց աշխատանքներէն ու հեւքոտ առօրեայէն տուն վերադառնալով կը փորձեն գէթ տան մէջ հանգստանալ եւ «խաղաղ» ժամեր անցընել ընտանիքի անդամներուն հետ, որովհետեւ տունէն դուրս ելլելն ու պտոյտի երթալը բաւական մեծ դուժմար կ'ենթադրէ, քան մը, որ շատ յաճախ կը բացակայի անոնց զրպաններէն:

Ամառն ու տաքը իրենց լաւով ու վատով թակեցին լիբանանցիներուն դռները, եւ Օգոստոսը իր բարձր ջերմաստիճանով մուտք գործեց բոլորին տուններէն ներս, իրեն հետ բերելով ելեկտրականութեան ընդհատումները, որոնք շատ աւելի անտանելի դարձուցին տիրող մթնոլորտը:

Ելեկտրականութեան ընդհատումը բնական երեւոյթ է Լիբանանի մէջ, եւ քաղաքացիները վարժ են անոր, սակայն վերջին ամսուան ընթացքին ընդհատումները այնքան երկարատեւ եղան եւ կարող մը շրջաններու մէջ հասան նոյնիսկ օրական 20 - 22 ժամի, որ նոյնիսկ ելեկտրածին շարժակները չգիշերեցան եւ որոշ ժամեր դադարեցան գործելէ:


Իր կեանքէն ու առօրեայէն արդէն յոգնած ու զգուած քաղաքացիին համար կացութիւնը կը վատթարանայ ելեկտրականութեան չզոյլութեան պատճառով, որովհետեւ փաստօրէն օրական երկու - երեք ժամ ելեկտրականութիւն ունենալով՝ ան ոչ մէկ ձեւով կը հասնի իր տան մէջ գործատեղիին կարիքները հոգալու կամ առօրեայ տարրական իր աշխատանքները կատարելու: Վիճակը աւելի կը բարդանայ ու նեղացուցիչ կը դառնայ գիշերները, երբ ամառն տաքին կողքին, մթնոլթիւնը կը տիրէ տուններուն մէջ եւ կը ծանրացնէ քաղաքացիներուն արդէն իսկ ճնշուած հոգեկանը:

Մինչ Միացեալ Նահանգներու եւ Քանադայի մէջ քանի մը ժամուան ելեկտրականութեան ընդհատումը մեծ ազդու կ'առաջացուց, աշխարհը ցնցեց եւ դարձաւ այդ օրերու գլխաւոր լուրը, Լիբանանի մէջ ազդու կը բարձրանայ միայն այն ատեն, երբ լոյսերը վառին եւ ելեկտրականութիւնը այցելուի նման մտնէ տուններէն ներս...

Ցաւալին այն է, որ հակառակ ասոր, քաղաքացիները կը շարունակեն վճարել ելեկտրականութեան սակերը, որոնք այդքան ալ չնչին ու աննշան չեն: Ասոր կողքին, անոնք նաեւ ունին ելեկտրածին շարժակներուն ամսական մասնակցութիւնը: Մարդոց դժբախտութիւնն ու դժուարութիւնները կ'օգտագործուի այս վերջիններուն կողմէ, որոնք ներկայ կացութեանէն քաղաքացիներով՝ բարձրացուցած են իրենց սակերը եւ նուազեցուցած՝ մատակարարման ժամերը:

Իր առօրեայ հացը դժուարութեամբ ապահովող քաղաքացի կը դառնայ խաղաքարտ մը գանազան կողմերու միջեւ, որոնցմէ իւրաքանչիւրը կը փորձէ ձեռով մը օգտուիլ ստեղծուած կացութեանէն եւ այս տագնապին մէջ ձեռք բերել առաւելագոյն շահ:

Աւելի դժուար կացութեան դիմաց կը յայտնուին այն շրջաններուն մէջ ապրող քաղաքացիները, ուր տակաւին ելեկտրածին շարժակներ գոյութիւն չունին: Այդ շրջանները բառին ամբողջական առումով մուլթ գիշերներ կ'ապրին եւ պատերազմի դառն օրերը յիշելով եւ երբեմն անոնց երանի տալով ամբողջ օրուան վազվզուքէն ետք «կը հանգչին» մոմի լոյսին տակ: Կացութիւնը նոյնն է նաեւ այն ընտանիքներուն համար,



ստանան գրեթէ 24 ժամ ելեկտրականութիւն, իսկ այլ շրջաններէն 24 ժամ ելեկտրականութիւնը կ'անջատուի, այլ շրջաններ 2 - 3 ժամ կ'օտուի լոյսով, իսկ մնացեալը՝ 20 - 21 ժամ: Այս պարագային եւս չափանիշները քաղաքացիներուն գիտակցութեանէն կախեալ չեն, այլ կ'որոշուին ըստ պատասխանատուներուն քմայքին...:

Երկրին մէջ տիրող դրեթէ ամբողջական խաւարին պատճառը բնականաբար պէտք չէ փնտելլ այսօրուան պայմաններուն մէջ միայն եւ կացութեան միակ պատասխանատուն նկատել ներկայ իշխանաւորները:

Երկար տարիներէ ի վեր Լիբանան այս կացութեան մէջ կը գտնուի, եւ ելեկտրականութեան հարցը կը մնայ անոր առօրեայ մտահոգութիւններէն մէկը, սակայն այս մտահոգութիւնը վերջին շրջանին տագնապի վերածուեցաւ, երբ Լիբանան ապրեցաւ 24 ժամ ամբողջական խաւարի մէջ ապրելու սպառնալիքը:

Կացութիւնը որոշ չափով բարելաւելու եւ երկիրը իր ճիշդ ուղին վրայ դնելու համար կարգ մը փորձեր կատարուեցան եւ յատարարուեցաւ բարեկարգումներու արշաւ, որուն ընթացքին ապօրինութիւններն ու օրինազանցութիւնները պիտի կասեցուէին: Փաստօրէն այս արշաւը ցոյց տուաւ, թէ իրենց ստացած ելեկտրականութեան փոխարէն դրամ վճարողներուն թիւը շատ աւելի է, քան՝ ձրիարար 24 ժամ ելեկտրականութիւն ստացողներունը:

Տարիներու ընթացքին եղած այս ապօրինութիւններուն պատճառով այսօր Լիբանանի ելեկտրականութեան ընկերութիւնը կը գտնուի մեծ պարտքերու տակ եւ անոր պարտքերը կը հասնին 3 միլիարտ տոլարի: Այս բոլորին կողքին, կացութեան լուծում մը գտնելու համար ան ստիպուած է նորանոր պարտքերու տակ մտնելու եւ վառելանիթ ապահովելու:

Ելեկտրականութեան ընկերութեան պաշտօնեաները, ներքին ապահովութեան ուժերու եւ բանակայիններու ընկերակցութեամբ, սկսան ապօրինութիւններու բացայայտման աշխատանքներուն: Լիբանանեան գրեթէ բոլոր շրջաններուն մէջ ելեկտրական հոսանք փոխադրող թեւերուն կացութիւնը ահալոր է եւ՝ իրար անցած: Թիւեր կ'ապուած են



այս կամ այն սիւնին, որմէ սկզբունքով միայն մէկ թաղի ելեկտրականութիւն պէտք է բաշխուի, սակայն թեւերուն ուղղութիւնը անյայտ է ու անորոշ: Ելեկտրականութեան ընկերութեան պաշտօնեաները իրենք իսկ չեն կրնար գիտնալ, թէ ի՞նչ է պատահածը, թէ ինչու՞ այդ թեւերը հոն ամրացուած են եւ անոնք ո՞ր տունն են կեղծ են: Վիճակը ահալոր է եւ ցաւալի, սակայն աւելի խղճալի է այն իրողութիւնը, որ շատ յաճախ օրէնքէն շեղուած չկատարելու սկզբունքով ապրող ընտանիքներ, իրենց սպառած ելեկտրականութեան կողքին, կը վճարեն իրենց դրացիներուն ելեկտրականութիւնը, որուն թիւը միացած կ'ըլլայ իրեն:

Դատարանները եւ դատախազները այժմ լծուած են աշխուժ աշխատանքի՝ օրինազանցները պատժելու համար եւ արդէն որոշ պատիժներ հրապարակուած են եւ անոնց կարգին նշուած է երեք ամսուան բանտարկութեան մինչեւ մէկ միլիոն Լ սուկի տուգանք:

1993էն ի վեր քաղաքացի կը լսէ, թէ յառաջիկայ տարի 24 ժամ ելեկտրականութիւն պիտի ունենայ, ստիպուած պիտի չըլլայ յաւելեալ ծախսեր ընելու, սակայն կացութիւնը կը մնայ նոյնը եւ ամէն տարի այս հարցը կը քննարկուի նախարարաց խորհուրդին կողմէ, առաջարկներ կը ներկայացուին, նորանոր ծրագիրներ կը մշակուին այս բնագաւառը բարելաւելու համար, բայց բոլոր պարագաներուն հարցեր կը ծագին գանազան կողմերու միջեւ՝ եւ պարագան կը մնայ նոյնը, մինչեւ աւելի մեծ տագնապներու ծագումը:

Արեւածագին հետ իսկ խաւարի ու մթնոլթեան մէջ ապրող լիբանանցիները այսօր կը փորձեն այս կամ այն ձեւով դուրս գալ անկէ եւ գտնել իրենց ժպտացող լոյսի նշոյլը, որ նորանոր յոյսեր պիտի ներշնչէ իրենց, սակայն գլխաւոր հարցումը կը շարունակէ մնալ այն, թէ այդ նշոյլը արդեօք պիտի երեւի՞...:

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՐՍ (SARS)



Այսօր, երրորդ հազարամեակին սկիզբը, աշխարհը դէմ յանդիման կը գտնուի փոխանցիկ հիւանդութեան մը, որ կը կոչուի ՍԱՐՍ: ՍԱՐՍը շնչառական գրութեան կամ գործարաններու մահացու բորբոքումն է: S.A.R.S. կը նշանակէ Severe Acute Respiratory Syndrome: Մինչեւ օրս տակաւին անկէ պաշտպանուելու պատուաստ մը չէ գտնուած. ինչպէս նաեւ չկայ տակաւին այս հիւանդութեան դէմ դնող դեղ մը՝ հիւանդանոց պարագային: ՍԱՐՍը ներկայիս շատ աւելի վտանգաւոր կը նկատուի ՍԻՏԱՆէն, որովհետեւ անոր վտանգը չի սահմանափակուի մահացու ըլլալուն մէջ միայն, այլ նաեւ՝ արագ տարածուելուն եւ փոխանցուելուն մէջ, ինչպէս որ ինֆլուենցայի ժահրերը կը տարածուին ուղղակի կամ անուղղակի միջոցներով: Երկու ամսուան ընթացքին ՍԱՐՍով հիւանդացած 3300 անհատներէն 140ը մահացաւ:

ԻՆՉՔ ԵՄԱՐԸ ԵՒ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Ե ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԿԷ

Վերջին ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ ՍԱՐՍ հիւանդութիւնը յառաջացնողը կամ պատճառողը նոր տեսակի ժահր մըն է, որ կը կոչուի «Քորոնա վայրս»: Ի յայտ եկաւ, թէ ՍԱՐՍ հիւանդութիւնը տարբեր ձեւ կրնայ ստանալ գանազան ժողովուրդներու մէջ: Ուսումնասիրութիւնները ցոյց տուին նաեւ, թէ ան երբեք չի նմանի անասուններէ յառաջ եկած ժահրերուն: Քանատացի գիտնականներ կարողացան կայմել ժահրին ժառանգական բարոտէսը՝ Վանքուլը քաղաքի «Մալթր Սմիթ» կեդրոնին մէջ: Անոնք փաստեցին, որ ՍԱՐՍ բաղկացած է 29,736 գոյգ կորիզակներէ (nucleotides), որ կը նշանակէ, թէ բաւական մեծ ժահր մըն է՝ բաղդատած այլ ժահրերու, որոնց կորիզակներուն քանակը չ'անցնիր քանի մը հազարը: Կորիզակներուն շարքը գիտնալով՝ գիտնականները կրնան գիտնալ ժահրին արտադրած փրոթէինին տեսակները մարդ արարածին մարմնին մէջ, հետեւաբար կը կարողանան դադարեցնել անոր գործողութիւնը դիմադրող յատուկ դեղերով:

ՍԱՐՍի փոխանցմանը նման են ինֆլուենցայի փոխանցմաններուն: Ինֆլուենցային փոխանցմաններն են՝ ջերմաստիճանի բարձրացումը, դողը, գլխացաւը, մկանային ցաւը, չոր հազը եւ շունչի նեղութիւնը: Շունչի նեղութիւնը պատճառ կը դառնայ, որ եսթրոնի թթուածինի դիմակ գործածէ: ՍԱՐՍ հիւանդութիւնը յառաջանալով՝ պատճառ կը դառնայ ենթակային մահուան:

ՍԱՐՍի գոյութեան կամ ծագման մասին երեք կարծիքներ կան ներկայիս.

- 1.- Ժահրը ի յայտ եկած է ծինային փոխակերպումով, այսինքն՝ երկու ուրիշ ժահրերու, որոնք արդէն գոյութիւն ունէին,
- 2.- Ժահրը ծինային փոփոխութիւններ կրելով սկսաւ զարգանալ եւ անոր մահացու եւ փոխանցիկ ըլլալու կարողութիւնը աւելնալ:
- 3.- Նոր ժահր մըն է, որ անասուններէն յառաջ եկած է եւ տարածուած է մարդոց մէջ:

Ներկայիս գանազան ուսումնասիրութիւնները կը կատարուին մահացու ժահրերուն մասին՝ գիտնալու համար մահուան պատճառը: Ուսումնասիրութեան պատասխանէն բաժին մը կրնայ ըլլալ այն, որ այս ժահրերը կարողութիւնը ունին տարածուելու եւ փոխանցուելու մարմնի գանազան հիւսկէններուն մէջ: Կարգ մը ժահրեր կը սահմանափակուին մէկ հիւսկէնի մէջ կամ անոր վերնախւանդակի վրայ, սակայն ՍԱՐՍը կրնայ տարածուիլ այլ հիւսկէններուն մէջ: Որեւէ ժահրի տարածումը երբեմն կրնայ պատճառ ըլլալ անոր արտադրած փրոթէինին մէջ գտնուող «Ամինո ասիտ» փոփոխութիւններուն:

Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւնը կ'ենթադրէ, թէ ՍԱՐՍը ի յայտ եկաւ Նոյեմբեր 2002ին, Չինաստանի հարաւը, եւ ապա սկսաւ տարածուիլ դէպի Հոնկ Բոնկ եւ այլ շրջաններ:

Մինչեւ օրս ոչ մէկ բուժում գոյութիւն ունի այս հիւանդութեան, սակայն կարելի է կանխարգիլել գայն՝ զարգացնելով հիւանդութիւնը կանուխ ի յայտ բերելու միջոցները, հիւանդները առանձնացնելով, դիմակներ գործածելով եւ շրջապատը հակաանոթային ներկայիս այս միջոցներուն կարելի է միայն ապաւինել, մինչեւ որ յայտնաբերուի այս հիւանդութեան առաջը առնող պատուաստի տեսակ մը:



որոնք անկարող են այս գոյգ ծախսերը հոգալու եւ ելեկտրածին շարժակներուն դրամ վճարելու:

Ինչպէս կեանքի բոլոր մարգերուն մէջ, այս պարագային եւս խտրականութիւնը նկատելի է, որովհետեւ կարգ մը շրջաններ կը



Կնոջական

Փորձ - Ընդհանրություն

ՉԱՆԱԽԵՐ ԷՔ

